ՀՈՌՈՄՈՍ—ԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԳՏՆՎՈՂ ԿԱՄԱՐԸ

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ճարտարապետական բազմաթիվ նշանակալից հուշարձաններով հայտնի է ոչ միայն Անին, այլև նրա շրջակայքը, ուր տարբեր ժամանակներում կառուցվել են մի շարք վանական համալիրներ և առանձին եկեղեցիներ (Հոռոմոս, Բագնայր, Արջո Առիճ, Խծկոնք, Կարմիր վանք և այլն)։ Մի ինքնատիպ ճարտարապետական հուշարձան է կառուցված Հոռոմոսից Անի տանող ճանապարհին, որը Ն. Տոկարսկին համարում է իր տեսակի մեջ միակը[1]։ Թ. Հակոբյանը վերջերս հրատարակված «Անիի պատմության» մեջ նշում է, որ հուշարձանի «...հիմնադրման ժամանակն ու որպիսությունը նյութերի և փաստերի բացակայության պատճառով չի պարզաբանված»[2]։ Խոսքը Սըմբատյան պարիսպներից երեք-չորս կիլոմետր հեռավորությամբ գտնվող զույգ աշտարակավոր կամարի կամ Ղոշերի[3] մասին է։ 1851 թ. Անի կատարած ուղևորության ժամանակ Ա. Մխիթարյանցը հետևյալ նկարագրությունն է արել. «Այս երկու զանգակատունները կոփածո սևագույն կարմիր քարով շինված են երեքհարկյան, վարի կողմեն մեկ մեկ գուռ ունենալով՝ դեմ առ դեմ իրարու կը նային. գմբեթները չորս փոքրիկ սյուներու վրա հաստատված են առանց խաչի. ցավալին այն է, որ արձանագրություն չունին։»[4]։

Դարասկզբին աշտարակներից մեկը կիսականգուն էր, կամարը՝ փլված և միայն մի աշտարակն էր լավ պահպանված (նկ. 1)։ Հուշարձանին վերագրվել է կամ զանգակատան, կամ հաղթակամարի դեր։ Զանգակատուն լինելու մասին ենթադրությունը հիմնված է միայն ժողովրդական ավանդության վրա, ըստ որի թագավորի Հոռոմոս գնալու ժամանակ աշտարակներից զանգեր էին հնչեցվում[5]։ «Հաղթակամար» անվանումը նույնպես չունի ոչ մի հիմնավորում։ Եթե այն կառուցված լիներ «Բագրատունի որևէ թագավորի կողմից, ի նշան նրա տարած հաղթանակի»[6], ապա չէր գտնվի արքայանիստ քաղաքից դուրս, արվարձանի եզրին, երբ բոլոր գլխավոր (հատկապես թագավորաշեն) շինությունները կառուցվում էին միայն պարիսպներից ներս։ Հայ ժողովրդի պատմությունից մեզ հայտնի չէ որևէ դեպք, որ թագավորը կառուցի հաղթակամար, իսկ եթե նրանցից մեկը այդպիսի բան արած լիներ, դժվար թե մեր պատմիչները անտեսեին այդ ուշագրավ փաստը, մանավանդ, եթե խոսքը վերաբերում է Անիին։ Այդ ժամանակաշրջանում ի հավերժացումն որևէ նշանավոր իրադարձության կարող էին խաչքար կանգնեցնել։ Թ. Թորամանյանը հուշարձանը անվանում է «Հաղթական կամար համարված

---

1 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 278—279։

2 Թ. Հակոբյան, Անիի պատմություն, Երևան, 1980, էջ 275։

3 Այդ անունը ստացել է հետագայում, թուրքերեն նշանակում է զույգ կամ զուգահեռ։ Տե՛ս Турецко-русский словарь, М., 1977, с. 562.

4 Արել Մխիթարյանց, Ճանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1855, էջ 49։

5 Լեո, Անի, Երևան, 1946, էջ 132—133։ Ա. Վրույր, Անիում, Երևան, 1964, էջ 100։

6 Այդ եզրակացությունը արել է Պ. Էժեն-Պոռեն, տե՛ս Ա. Մխիթարյանց, նշվ. աշխ. էջ 48—49։

դում»[7]։ Իսկ երբեմն էլ ուսումնասիրողները բավարարվել են ակնհայտորեն հետագայում առաջացած, օտարածին Ղոշեր անվանմամբ[8]։ Թ. Հակոբյանը գրում է. «Ճիշտ է ասում Լեոն, այդ զույգ աշտարակները մնում են իբրև առեղծված։ Փաստերի և գրավոր աղբյուրների բացակայությունը թույլ չի տալիս որոշ պարզություն մտցնել այդ հարցում»[9]։

Մեր կողմից այս ճարտարապետական հուշարձանին անդրադառնալու պատճառը «Հաղբատի ավետարանում» Մարգարե ծաղկողի նկարած Երուսաղեմ քաղաքի մուտքի հետ նրա ունեցած մեծ նմանությունն է (նկ. 2)։ Սակայն մինչև մանրանկարի և ճարտարապետական հուշարձանի առնչության մասին խոսելը, հարկ ենք համարում հիշել Մարգարեի արվեստի մի քանի առանձնահատկություններն ու «Հաղբատի ավետարանի» ստեղծման հետ կապված որոշ հանգամանքներ և հուշարձանի (այսուհետև կանվանենք մուտքի կամար) տեղադրության ու կառուցման ժամանակին վերաբերող մի քանի փաստեր։

Անին Շիրակի և երկրի մյուս շրջանների հետ կապված էր բազմաթիվ ճանապարհներով։ «Դրանցից գլխավորն անցնում էր Հոռոմոսի վանքով,— գրում է Վ. Հարությունյանը,— որի մոտ Ախուրյանի վրա ձգված էր քարե կամուրջ։ Բագրատունիների ժամանակ առաջացած այս վանքը, մայրաքաղաքի հեռավոր դարպասների նշանակությունն էր ստացել, որով, հավանաբար, պիտի բացատրել դեպի Անի եկող ուղևորներին սպասարկող հյուրանոցի, ինչպես և Ղոշեր կոչվող կառուցվածքի գոյությունն այստեղ։ Ըստ ընդունված կարծիքի, վերջինս հաղթական կամարի դեր էր կատարում Անի տանող ճանապարհին»[10]։ Ուրեմն մուտքի կամարը կառուցված է Հոռոմոսից Անի տանող ճանապարհին։ Իսկ որքան էր նրա հեռավորությունը քաղաքից։ Ն. Մառը, որը ավելի, քան այլ ոք, լավատեղյակ էր Անիի տեղադրությանը, հյուսիսային արվարձանի սահմանի մասին ասում է. «...քաղաքամերձ մասը հասնում էր մինչև երկու, հեռվից ղանգակատների նմանվող սյուները, Անիի միջնաբերդից չորս վերստ հեռավորությամբ»[11]։ Այդ կարծիքին է նաև Թ. Թորամանյանը, որին հետաղոտությունները հանգեցրել են այն եզրակացության, որ Անիի արվարձանները հասնում էին մինչև Հոռոմոսի վանքը[12]։ Նույն միտքն է պաշտպանում նաև Լեոն, ավելացնելով. «...մի քաղաքի սահմանները նրա տները չեն որոշում, մանավանդ մի այնպիսի քաղաքի, որի բնակիչների մի մասը հողագործությամբ և անասնապահությամբ էր պարապում»[13]։ Ուրեմն Անի քաղաքի արվարձանները հասնում էին մինչև Հոռոմոսի վանքը, հետևաբար հիշյալ կամարը կառուցված էր քաղաքի և վանքի սահմանաեզրին։ Մուտքի կամարը միայնակ հուշարձան է, զուրկ պարիսպներից, սակայն

---

7 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատ. ժողովածու, Երևան, 1942, էջ 299։

8 Հուշարձանը այդպես են անվանում Ղ. Ալիշանը (տե՛ս «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 18), Վ. Հարությունյանը (տե՛ս «Անի քաղաքը», Երևան, 1964, նկ. 3) և այլք։ Հետաքրքրական է, որ այս համեմատաբար փոքր հուշարձանը իր անունն է թողել Հոռոմոսի նշանավոր վանքի վրա, որը կոչվել է նաև Ղոշավանք։

9 Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 277։

10 Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 22—23։

11 Н. Я. Марр, Ани столица древней Армении (историко-археологический набросок), «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898, с. 221.

12 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 327—328։

13 Լեո, նշվ. աշխ., էջ 256։

ունենալով բարձր, շրջապատի վրա իշխող դիրք, այն հավանորեն ծառայել է նաև որպես քաղաքի սահմանում գտնվող դիտակետ, որովհետև զույգ աշտարակներն ունեին դռներ, պատուհաններ և ներսում՝ վերև տանող քարե աստիճաններ, ինչպես նաև անցում մի աշտարակից մյուսը, կամարի վրայով[14]։

1843—1853 թթ. լինելով Հայաստանի մի շարք շրջաններում, Ն. Սարգսյանը նկարագրել է նաև Անին ու մուտքի կամարը, ուր մեր իմացածին ավելացնում է հետևյալը. «Արձանագիր կայր յարևմտից կուսէ միոյն, այլ եղծեալ իսպառ»[15]։

Մուտքի կամարի կառուցման մոտավոր ժամանակը որոշելու համար արժեքավոր տեղեկություն է հաղորդում Ղ. Ալիշանը. «Ի հարավոյ կուսէ միոյ լաշտարակացն է դռնակն 12 աստիճանօք ելանել ի սենեակն. և ի հիւսիսային որմն յիշատակարան թուականաւ 1102 ամի. «ՇՄԱ ես Խաչատուրս գրեցի»[16]։ Ուրեմն մուտքի կամարը կառուցվել է 1102 թ. առաջ, ամենայն հավանականությամբ Բագրատունիների օրոք, Անի քաղաքի և Հոռոմոսի վանքի սահմանագծում։

Նշանավոր «Հաղբատի ավետարանը»[17] մանրանկարիչ Մարգարեն 1211 թ. նկարազարդել է Անիի Բեխենց վանքում[18]։ Մարգարե ծաղկողը ապրել և ստեղծագործել է Անիում, Զաքարյանների օրոք, քաղաքի երկրորդ վերելքի տարիներին։ Նրա արվեստում արտահայտվել է բարձրացող առևտրա-արհեստավորական դասի ճաշակն ու հոգեբանությունը՝ հանձին ոչ շատ ճոխ, սակայն գեղեցիկ և ազատաբարո ոճի, որը քաղաքային բարեկեցիկ կյանքի արգասիք էր։ Պատահական չէ, որ հենց Բեխենց վանքը, ուր նկարազարդվել է «Հաղբատի ավետարանը», պատկանում էր նշանավոր մեծահարուստ Տիգրան Հոնենցին։ Ծանոթանալով Մարգարեի ստեղծագործությանը, դժվար չէ նկատել, որ նա նյութ է ստացել ոչ միայն իրենից առաջ մշակված պատկերազարդման ընդունված կանոններից, այլև իր շրջապատից և կենսափորձից, ուստի և նրա նկարներում հանդիպում ենք առօրյա կյանքից վերցված երևույթների ու մարդկանց պատկերների։ «Հաղբատի ավետարանի» նկարազարդման մեջ չենք գտնում սուրբ տեքստի հրաշապատումը, զարմանալին ու խորհրդավորը։ Ծաղկողը ընդգծել է երկրայինը, ամենօրյա-հնարավորը և սիրով «պատմել» դրանց մասին»[19]։ Թարգմանելով աշխարհիկ լեզվի, Մարգարեն նորովի է պատկերում մարդկանց վարքն ու կենցաղը[20]։ Նկարչի ստեղծագործությունը բարձր է գնահատվել, որովհետև «...միայն տաղանդավորներն են, որ ավանդականի վրա իրենց անհատական դրոշմն են դնում...»[21]։ «Հաղբատի ավետարանի» «Մուտք Երուսաղեմ» նկարում ավետարանական դեպքը վերապատմված է որպես քաղաքային կյանքի մի իրողություն[22]։

---

14 Ն. Սարգսյան, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 168։

15 Նույն տեղում։

16 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 18։

17 Ձեռագիրը «Հաղբատի ավետարան» է կոչվել գրչության վայրի՝ Հաղբատի անունով։

18 «Հայկական Սովետական հանրագիտարան», հ. 6։ Ա. Մաթևոսյան, «Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության (անտիպ, «Բանբեր Մատենադարանի», № 14)։

19 Վ. Մաթևոսյան, Նկարիչ Մարգարեի արվեստը, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 88։

20 Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 30.

21 Դ. Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց, «Նիութեր և ուսումնասիրութիւններ», Երուսաղեմ, 1935, էջ 52։

22 Լ. Դուրնովո, Հայկական մանրանկարչություն, ալբոմ, Երևան, 1967, էջ 204։

Մարգարեի «Մուտք Երուսաղեմը» առանձնանում է իր նախորդ և ժամանակակից մանրանկարիչների գործերից, այն բոլորովին տարբեր ոճ ունի[23]։

Մարգարեն մի նկարիչ է, որի արվեստը զանազան կարծիքների տեղիք է տվել արվեստաբանների շրջանում։ Նրա մանրանկարներում մինչ այդ

Նկ. 1

չտեսնված առատությամբ հանդես են գալիս աշխարհիկ տարրեր։ «Հաղբատի ավետարանի» համաբարբառի խորանների գերանների վրա նա պատկերել է իրեն ծանոթ ձկնորս Շերանիկին՝ ձուկը ուսից կախ, մատռվակ երիտասարդին՝ գինու գավը ձեռքին, գուսանին նվագարանով՝ ծառի տակ ծալապատիկ

23 Ս. Տեր-Ներսեսյան, Հայագիտությունը արտասահմանում (ֆրանսիական «Archeologia» հանդեսի 4-րդ համարի հայագիտական նյութերը), Երևան, 1981, էջ 19։

նստած, Բեխենց վանքի առաջնորդ Եղբայրիկին, Հռոմոսի վանքից Աբրահամ կազմողին՝ իրենց յուրահատուկ տարազով ու կեցվածքով։ Այս պարագաներում միանգամայն բնական է Մարգարեի կողմից ձեռագրում միակ տերունական «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» նկարում որպես մուտքի կամա-

Նկ. 2

րի նախատիպ Հռոմոսից Անի տանող ճանապարհի մուտքի կամարի ընտրությունը։

Հետաքրքրական է «Հաղբատի ավետարանի» ստեղծման պատմությունը, որում որոշակի է Հռոմոսից Անի տանող ճանապարհի, ուստի և մուտքի կամարի դերը։ Ինչպես նշեցինք, Ավետարանը գրվել է Հաղբատում, Սահակ կրոնավորի պատվերով, որն էր «ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն

«Անուշ»[24]։ Ապա բերվել է Հոռոմոս, որպեսզի կաղմվի։ Սակայն ըստ երևույթին պատվիրատուին չի բավարարել ձեռագրի գեղարվեստական հարդարանքը և նա Ավետարանը Հոռոմոսից տարել է Անիի Բեխենց վանքը (որի ճանապարհը անցնում էր մուտքի կամարով), ուր և այն նկարազարդել է Մարգարեն[25]։ Պատվիրատու Սահակը ուներ երկու եղբայր՝ Առաքելը և Իպատոսը, վերջինս մահացել էր վաղ հասակում, «...որ կիսաւրեա եկ յաշխարհէս»[26]։ Ավետարանում «Մուտք Երուսաղեմ» նկարի դիմացի էջում պատկերված են Քրիստոսը (Ավետարանը ձեռքին), իսկ նրա առաջ պատվիրատու Սահակը և իր եղբայր Առաքելը։ «Մուտք Երուսաղեմում» քաղաք մտնող Քրիստոսին ուղեկցում են երկու աշակերտ։ Նրանցից մեկը՝ բարձրահասակն ու սպիտակամորուսը, լուսապսակ ունի, իսկ մյուսը՝ երիտասարդը՝ ոչ։ Ընդունված է պսակավորի մեջ տեսնել Պետրոս առաքյալին, իսկ պսակ չունեցողի մեջ՝ ժողովրդական խավերի ներկայացուցչին։

Նկարի մյուս կերպարները առանձնանում են Քրիստոսից և նրա ուղեկիցներից, նախ՝ նրանք նկարված են զգալիորեն փոքր չափերով և, ամենակարևորը, կրում են իրենց ժամանակի համար բնորոշ, անիկան տարազ։ Մուտքի դիմաց հյուրին դիմավորում են մի տարեց քաղաքացի (հագուստից դատելով՝ մեծահարուստ) և նրա խափշիկ ծառան, որը հագուստ է փռում ճանապարհին։

Այժմ, վերադառնալով մեր բուն խնդրին, դիտենք Մարգարեի «Մուտք Երուսաղեմ» նկարի և Հոռոմոսից Անի տանող ճանապարհին գտնվող կամարի լուսանկարները (նկ. 1, 2)։ Երկու դեպքում էլ աշտարակը եռահարկ է՝ գմբեթավոր։ Որոշակի է հարկերի համաչափային նմանությունը։ Բնական է, որ Մարգարե ծաղկողը չի փորձել նույնությամբ արտանկարել Անիի մուտքի կամարը։ Նկարում, շինության վրա, կա մեծ պատուհան, որտեղ ձիթենու ճյուղը ձեռքին կանգնած է մի տարեց կին և պատշգամբ, ուր երկու մանկամարդ աղջիկներ ձեռքերը մեկնել են դեպի ձիթենու ծառը՝ նրա վրա գտնվող երիտասարդներից ճյուղեր ստանալու համար։ Կամարի վրա գրված է՝ «Երուսաղէմ քաղաք»։ Սակայն Մարգարեն նկարել է այն, ինչը ծանոթ է եղել իրեն, այն, ինչ նա տեսել է Անիում։ Նկարված շինության և մուտքի կամարի աշտարակի կոմպոզիցիոն ու հարկերի համաչափային նմանությանը պետք է ավելացնել փոքրիկ լուսամուտների նույնությունը, ինչպես և այն, որ երկու դեպքում էլ կամարը կապված է առաջին հարկի նույն մասում։ Ահա այս հանգամանքներն են մեզ թույլ տալիս եզրակացնել, որ վերոհիշյալ հուշարձանը ոչ այլ ինչ է, եթե ոչ քաղաքի արվարձանի եզրին կառուցված մուտքի կամար։ Անիից Հոռոմոս գնացողների համար այն մուտք է Հոռոմոս, իսկ հակառակ ուղղությամբ եկողների համար՝ մուտք Անի։

Ինչո՞ւ ենք հուշարձանը անվանում մուտքի կամար։ Վերը նշեցինք, որ ո՛չ հաղթական կամար կամ զանգակատուն, ո՛չ էլ զոշեր անունները չեն համապատասխանում հուշարձանին։ Դուռ-զարպաս-մուտք, այսպիսին է հուշարձանի նշանակությունը[27]։ Մուտքի կամարը դարձյալ ընդգծում է անեցիների

---

24 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 784։

25 Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ.։

26 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք..., էջ 747։

27 Ն. Մարը հուշարձանը անվանում է «հաղթական դարպաս» «триумфальные ворота» (Н. Я. Марр, Ани, М.—Л., 1934, илл. 17 а)։ Հետագայում գրականության մեջ այն կոչվում է «հաղթական կամար», «триумфальная арка» (В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, илл. № 30)։

ձգտումը՝ համատեղել գեղեցիկը և օգտակարը (մի սկզբունք, որն իր արտացոլումն է գտել անգամ քաղաքի պարիսպների ձևավորման մեջ)[28]։ Մուտքի կամարը մեր կարծիքով կատարել է երկու կարևոր դեր։ Հոռոմոսի կողմից Անի եկողների համար ծառայել է որպես տպավորիչ և գեղեցիկ մուտք դեպի քաղաք։ Փառահեղ եկեղեցիներով և այլ բարձրարվեստ շինություններով հարուստ քաղաքը չպետք է Անի եկողներին ներկայանար սոսկ խրճիթաշեն արվարձանով։ Սակայն մուտքի կամարը չի կառուցվել զուտ գեղագիտական նկատառումներով։ Այն ծառայել է նաև որպես քաղաքի արվարձանում տեղադրված դիտակետ։ Այսպիսով, Անի քաղաքի հյուսիսում գտնվող վերոհիշյալ հուշարձանը, որը տարբեր հեղինակների կողմից տարբեր անուններ է ստացել, մեր կարծիքով կառուցվել է Անիի արվարձանի եզրին իբրև մուտք, 1102 թ. առաջ, հավանաբար Բագրատունի թագավորների օրոք, երբ «տիեզերահռչակ Անի քաղաքը» ապրում էր քաղաքական, տնտեսական և մշակութային բուռն ծաղկման տարիներ։ Սույն հուշարձանը Մարգարե ծաղկողը ընտրել է որպես քաղաքային մուտքի նախատիպ՝ «Հաղբատի ավետարանի» «Մուտք Երուսաղեմ» նկարն ստեղծելիս։

АРКА, НАХОДЯЩАЯСЯ НА ДОРОГЕ ОРОМОС—АНИ

К. А. МАТЕВОСЯН

(Резюме)

На главной дороге, ведущей в Ани с севера, на участке Оромос—Ани, сохранился интереснейший архитектурный памятник—арка, оформленная двумя трехъярусными купольными башнями. Время строительства и назначение арки окончательно не установлены. Некоторые исследователи относят памятник к типу триумфальной арки, другие же к типу колокольни. В Ахпатском евангелии на известной миниатюре «Въезд в Иерусалим» художника Маркарэ изображено архитектурное сооружение, служащее входом в город, которое по композиции и по соотношению частей очень близко к упомянутому анийскому памятнику. Учитывая то обстоятельство, что художник жил и работал в Ани, можно предположить, что прототипом композиции иерусалимских входных ворот была для Маркарэ анийская двубашенная арка; следовательно, последняя также является входным сооружением, конкретно—входной аркой. Сооружена она, по-видимому, при Багратидах (не позднее 1102 г.—дата, сохранившаяся на одной из башен).

Մեր կարծիքով գերադասելի է մուտքի համար «входная арка» *ճարտարապետության մեջ ընդունված անվանումը։*

28 *Խոսելով քաղաքի «պարիսպների գույնը ավելի կենդանացնելու համար» կարմիր ու սև քարերով շարքերի, նրանցով կազմված գոտիների, «զանազան ձևերի» և «մինչև անգամ ապակյա ու հախճապակյա կիսագնդակների մնացորդների» մասին, որոնք ագուցված են պարսպի առանձին քարերի մեջ, Հ. Օրբելին գրում է.* «Անիի պարիսպները ամենալավ կերպով բնորոշում են անեցիների ձգտումը, ըստ հարմարության, ամեն բան զարդարել որևէ կերպ» *(Հ. Օրբելի, «Անվո ավերակները», Վաղարշապատ, 1911, էջ 30)։*